

Լինելու ընծայ պիտի անեն ինձ: Սկսում էր մի ներկայացումն, դուրս էր գալիս մի հրաշալի պատկեր, և ես չէի հաւատում, որ այդ պատկերն իմ նկարածն է, այնքան գեղերկացրած էր լինում տիկինը և կենդանացրած: Այսօրւանից յետոյ ահա ես գլխովին նուիրուեցի մանկական գրականութեան, որնք տաղադրուեցին «Աղբիւրում» մի քանի տարի շարունակ: Այն ժամանակ կազմեցի ես իմ «Ուսումն մայրենի լեզուի» երկրորդ և երրորդ դասագրքերը»:¹⁾

Այսպիսով մենք տեսնում ենք, որ մանկական պարտէզը խորը և անջնջելի տալաւորութիւն է թողնում Աղայեանի վերայ և դարեւ տալիս նրա շատ ընդունակութիւններէն յատկապէս մէկի՝ մանկական—գրականի զարգացմանը:

Այնուհետեւ դեռ էլի երկար տարիներ՝ մինչեւ մահ Աղայեանը շարունակել է իւր հասարակական, գրական—մանկավարժական գործը միշտ և ամենուրեք ցոյց տալով փայլուն յաջողութիւն, որի մասին յաջորդ անգամ կտանք մեր դիտողութիւնները:

Շառունակելի

Ա. Բէլ Ա. Բեդալ



ՄԵՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

«Родство грузинъ съ испанцами». Л. М. Меликсетъ — Бековъ

Այս վերնագիրը կրող գրքուկի առիթով «Մշակ»-ի № 166 բանասիրականում պ. Աւան Քալանթարը համառօտում է գրքուկի բովանդակութիւնն ու աւելացնում մի քանի խօսք աղգերի իրար հետ առնչութեան մասին: Ուստի և կարեք չենք տեսնում նոյնը երկրորդէլ ընդարձակօրէն:

Համառօտ տեսնք. գրքուկի նպատակն է ապացուցանել, որ թէև հնումն Սպանիան էլ Վրաստանն էլ իրերիւ, ի վերիւ էին կոչւում, սակայն բացի անուանական նոյնութիւնից, այդ երկու աղգերի մէջ չկայ ցեղական կամ լեզուական ոչ մի առնչութիւն:

Գրքուկի մէջ (եր. 23—27) հայերիս համար հետաքրքիր է Մար-Աբա—Կարինայի միջոցով Արեւդենոսից առած աւանդութիւնը որ Մովսէս Խորենացին պատմում է, (գիրք Բ. գլ. 8) և որ պ. Մելիքսեթ-Բէկեանը այսպէս է առաջ բերում.

1) Մուրճ 1984 թ. 33 երես.

«Մեծագոր նաբուգոդոնոսորը հզօրագոյն եր յիբիական Հերփիւկոսից։
Զօրք ժողովելով յարձակում է Իբերացիների վերայ, աւերում է,
նուանում է նրանց իւր իշխանութեան տակ եւ նրանց մի մասն էլ
դուրս է հանում ու բնակեցնում Պոնտոսի ծովի աջ ափին արեւ-
մեայան կողմը»։

Ապա հեղինակը պարզում է, որ թէև Մովսէս Խորենա-
ցին և նրանից յետոյ եղող հայ պատմիչները — Ստեփաննոս Տա-
րօնեցի և Վարդան Բարձրբերդցին նաբուգոդոնոսորի Իբերիայի
վերայ արշաւանքի վէպը վերագրում են Աբիւղենոսին, սա-
կայն վէպի առաջին աւանդողը Մեգասթենէսն (Μεγασθένης) է,
և Աբիւղենոսը միայն կրկնում է այն։ Յունական բնագրում
ասուած է. Μεγασθένης δὲ φησι, Ναβουχοδρόσορον . . . «Մեգաս-
թենէս ասէ. նաբուգոդոնոսոր . . . », թարգմանիչը, հաւանո-
ւէն, չհասկանալով թէ Մեգասթենէսը յատուկ անուն է, թարգ-
մանել է որպէս ածական անուն՝ ծագած յոյն μέγας բառից,
որ «մեծ», «զօրեղ», «կարօղ» է նշանակում, որից և Μεγασθηνέσ-ը
թարգմանուլթեան մէջ դարձել է «մեծագոր» և այսպէս ըմ-
բռնելով, յիշեալ բառը յարագրուել է մօտիկ եղած նաբու-
գոդոնոսոր անունին. իսկ հետեւանքը եղել ոչ այն, ինչ որ
պէտք էր, այն է. «Աբիւղենոսը ճառում է. Մեգասթենէս ասում
է (որ) նաբուգոդոնոսորը . . . , այլ բոլորովին այլ բան, այն է.
Աբիւղենոսը վիպում է, (թէ) «մեծագոր նաբուգոդոնոսորը»։

Աւերմն Խորենացու մէջ (գիրք Բ. դժ. 8.) հետեւեալ պար-
բերութիւնը—«որպէս Աբիւղենոս պատմէ այսպէս ասելով.
մեծագորն նաբուգոդոնոսոր բռնադոյն . . . » պէտք է օւղղել.
«որպէս Աբիւղենոս պատմէ այսպէս ասելով. Մեգասթենէս
ասէ. նաբուգոդոնոսոր բռնադոյն . . . »։

Յ. Ա. Ն.

